

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 26-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Փարիզի «Institut catholique»-ի աստվածաբանական ֆակուլտետի ուսանող Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 27-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

Հուլիսի 28-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնեց «Մերձմոսկովյան» առողջարան՝ հանգստանալու: Նորին Սրբությանը բարի ճանապարհ մաղթելու համար «Զվարթնոց» օդանավակայան էին եկել Մայր Աթոռի միաբանությունը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանն ու տեղակալ տիար Ռաֆիկ Զարգարյանը:

*
* *

Օգոստոսի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սերովբե աբղ. Իսախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Շնորհեա ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց» (Խորհրդատետր) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նավասարդ աբղ. Կճոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Տէր, ուղղեա զգնացս իմ ի ճանապարհս խաղաղութեան, Տէր, առաջնորդեա

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐՈՎ, ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ։
ՎԵՀԱՓԱՌԻ ՋԱԽԻՑ՝ ՀԱՅԱԳԵՏ ՊՐՈՖ. ԺԱՆ ՄԱՀԵ

(25 հուլիսի 1987 թ.)

ինձ ի ճանապարհ արդարութեան և ի կեանս յաւիտենից» (Ժամագիրք) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 16-ին, կիրակի.—Վերափոխումն Սուրբ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Համեղաճաշակ պըտղոյն բանաւոր բարունակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ յուրախութիւն տրտմեցելոցն ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան...» (Շարական) բնաբանով (տես էջ 8):

Պատարագի ավարտին արքազան հայրը կատարեց «Օրհնութիւն խաղողոյ» կարգը:

*
* *

Օգոստոսի 17-ին, երկուշաբթի.—Ցիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը:

*
* *

Օգոստոսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Նիկոզիայի հայոց հոգեվոր հովիվ Տ. Վազգեն քհն. Սանդրունին: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Լենինգրադի հոգևոր ակադեմիայում կատարելագործվելու մեկնած Տ. Եզրաս աբղ. Ներսիսյանը:

*
* *

Օգոստոսի 24-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ վերադարձավ «Մերձմոսկովյան» առողջարանից: «Զվարթնոց» օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանն ու տեղակալ տիար Ռաֆիկ Զարգարյանը:

*
* *

Օգոստոսի 30-ին, կիրակի.—Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Քեշիշյանը և «Հայր Մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, չև՞ ևս ունիք հաւատս» (Մարկ. Դ 40) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: